

ըեք տարի պիտի ապաշխարեն (կան. Գ). անշուշտ չափազանց պահանջ՝ ուսկից Առաքեալն անգամ կը զգուշանար (Ա. Կոր. Ե, 10): Գունայ Բ ժողովը կը պատուիրէ Նեստորականաց հետ եւս չհաղորդիլ, «մի՛ ի կերակուրս, մի՛ յըմպելիս» (Թղթ. 76): Եւ Տարօնացին նոյնը կը պահանջէ Թոնդրակեցոց մասին, ըսելով. «Ոչ է արժան... հաղորդել ընդ նոսա հացիւ» (Թէոփ. 260): Վերջապէս մեր մէջ յանուն Ս. Բարսղի ծանօթ կանոններն ալ կ'արգելուն սեղանակցիլ անհաւատից եւ ակօրիկաց հետ (ձիբ, ձձգ):

10. — Լուսացումն եւ գարդարանք: — Թէ կոչնատէր եւ թէ հրաւիրեալք ճաշէ յառաջ կարեւոր պատրաստութիւն մ'ունէին, որ երեք մասի կը բաժնուէր:

Ա. Լուսացումն, որ կրկին էր, ամբողջական ու մասնական: Առաջինը բնականապէս իւրաքանչիւրն իւր տան մէջ կը կատարէր կանխաւ, օգնականութեամբ ծառայից: Այսպէս Գրաստամատ Արշակայ ճաշ դնելէ յառաջ՝ անձամբ «յուսց զգրչի նորա եւ յոգացոյց զանձն նորա» (Փաւս. 207), ինչ որ միայն բազմամեայ բանտարգելութեան պահանջը չէր, այլ եւ սովորութեան, որ ծանօթ էր Յունաց, Հռովմայեցոց (Գար. Ա, 1272, '77), եւ ասոնց բարուց